ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

16 դեկտեմբերի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 5 անդամներ:

Բացակա էին՝ Ֆայզո Ալիյանը, Մարատ Կնյազյանը, Ալիխան Համեյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ջասմ Մախմուդովը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Արմինե Սարգսյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 10 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 16-ի N 10 հերթական նիստի օրակարգը.

1.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի 2026 թվականի նախնական բյուջեն հաստատելու մասին,

2.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի 2026 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին,

3.Արագածոտնի մարզի Ալագյազի համայնքապետարանի 2026 թվականի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին,

4.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում 2026թ. տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,

5.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում 2026 թվականի աղբահանությունը կազմակերպելու և աղբահանության վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,

6.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2025թ. ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին,

7.Ալագյազ համայնքի 2026 թվականի տարեկան աշխատանքային պլանը /ՏԱՊ/ հաստատելու մասին,

8.Ալագյազ համայնքի Ալագյազ վարչական բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխելու մասին,

9.Ալագյազ համայնքի Շենկանի վարչական բնակավայրում գտնվող Սվետա Լադիկի Ուսուբյանի և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին,

10.Ալագյազ համայնքի Ալագյազ վարչական բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին,

11.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 13-ի N 40 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

12.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքին պատկանող շենք-շինությունները ժամանակավոր օգտագործման տրամադրելու մասին,

13.Ալագյազի համայնքում ամանորյա միջոցառման համար գումար հատկացնելու մասին:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ջ. ԽՈՒԴՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 43)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՒԽԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով հանրային բաց քննարկումները՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Ալագյազ համայնքի 2026 թվականի նախնական բյուջեն՝ եկամտային 296 008 200 (երկու հարյուր իննսունվեց միլիոն ութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, 370 000 000 (երեք հարյուր յոթանասուն միլիոն) ՀՀ դրամ 2025 թվականի տարեվերջյան մնացորդ և ծախսային 666 008 400 (վեց հարյուր վաթսունվեց միլիոն ութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ համաձայն հավելված 1-ի:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ջ. ԽՈՒԴՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 44)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՒԽԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի պահանջներով՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի 2026 թվականի վարձատրությունը սահմանել 433000 (չորս հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ջ. ԽՈՒԴՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 45)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՒԽԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով և քննարկելով Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Արագածոտն մարզի Ալագյազի համայնքապետարանի 2026 թվականի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ջ. ԽՈՒԴՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 46)*

ԵՑԻՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՒԽԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածները՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ջ. ԽՈՒԴՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ

Ա. ՇԱԲՈՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 47)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՒԽԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ և 20-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Սահմանել Արագածոտն մարզի Ալագյազ համայնքում աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարի 2026 թվականի համար հետևյալ դրույքաչափերը՝

1)Բնակելի աղբի համար փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 50 դրամ:
2)Ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 10 դրամ:
3)Առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 60 դրամ:
4)Հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 30 դրամ:
5)Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 դրամ:
6)կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 5 դրամ:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ջ. ԽՈՒԴՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 48)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՒԽԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով և 77-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ջ. ԽՈՒԴՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 49)*

ԼՍԵՑԻՆ

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ /ՏԱՊ/ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՒՇԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ 1-ին մասի 4.1-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի կետով և 82.1-րդ հոդվածի պահանջներով՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Ալագյազ համայնքի 2026թ տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն N 1 հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ ծրագրերի ցանկն ընդգրկել համայնքի 2026 թվականի գնման պլանում՝ այն մինչև փետրվարի 1-ը սահմանված կարգով հրապարակելու համար:
3.Թույլատրել համայնքի ղեկավարին՝
ա) ծրագրի առանձին հատվածների իրականացման օբյեկտիվ անհնարինության կամ խնայողությունների դեպքում նախատեսված գումարն ուղղել առաջնահերթ և հրատապ լուծում պահանջող այլ խնդիրների լուծմանը:
բ) խիստ անհրաժեշտության առաջացման և ֆինանսական հնարավորության դեպքում ծրագրերի համար նախատեսված գումարի մինչև 20 %-ի չափով կատարելու լրացուցիչ հատկացումներ:
4.Համայնքի ղեկավարին՝ ապահովել կապիտալ ծրագրերի նախագծային- նախահաշվային փաստաթղթերի կազմումը, օրենքով սահմանված կարգով կազմակերպել աշխատանքների գնման գործընթացները և ժամանակին ապահովել ծրագրերի կատարումը:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ջ. ԽՈՒԴՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 50)*

ԼՍԵՑԻՆ

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱԳՅԱԶ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը, Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

.Ալագյազ համայնքի Ալագյազ բնակավայրի 3-րդ փողոց 5-րդ նրբանցք 4/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն համարվող 02-006-0006-0029 ծածկագրով 0.14875 հա բնակավայրերի նպատակային նշանակության և հասարակական գործառնական նշանակության հողամասը փոխել, որպես բնակավայրերի նպատակային նշանակության և բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
Համայնքի ղեկավարի կողմից կազմել հողաշինարարական գործը և ներկայացնել լիազոր մարմնի քննարկմանը:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ջ. ԽՈՒԴՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 51)*

ԼԵՑԻՆ

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՎԵՏԱ ԼԱԴԻԿԻ ՈՒՍՈՒԲՅԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը, ինչպես նաև ՀՀ Քաղաքաշինության, Տեխնիկական և Հրդեհային Անվտանգության Տեսչական Մարմնի 25.06.2025թ. N ՔՏՄ/06.1.02/16624-25 գրությունը, Սվետա Լադիկի Ուսուբյանի դիմումը, Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Ալագյազ համայնքի Շենկանի բնակավայրում գտնվող Սվետա Լադիկի Ուսուբյանի սեփականություն համարվող 02-083-0112-0014 ծածկագրով 0.1 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության և արոտավայր գործառնական նշանակության հողամասը փոխել, որպես բնակավայրերի նպատակային նշանակության և հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2.Ալագյազ համայնքի Շենկանի բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն համարվող 02-083-0112-0001 ծկագրից առանձնացվող 0.01718 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության և արոտավայր գործառնական նշանակության հողամասը փոխել, որպես բնակավայրերի նպատակային նշանակության և հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

3.Ալագյազ համայնքի Շենկանի բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն համարվող 02-083-0501-0001 ծածկագրից առանձնացվող 0.00456 հա բնակավայրերի նպատակային նշանակության և ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը փոխել, որպես բնակավայրերի նպատակային նշանակության և հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
4.Համայնքի ղեկավարի կողմից կազմել հողաշինարարական գործը և ներկայացնել լիազոր մարմնի քննարկմանը:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ջ. ԽՈՒԴՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 52)*

ԼՍԵՑԻՆ

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱԳՅԱԶ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը, ինչպես նաև ՀՀ Քաղաքաշինության, Տեխնիկական և Հրդեհային Անվտանգության Տեսչական Մարմնի 25.06.2025թ. N ՔՏՄ/06.1.02/16624-25 գրությունը, «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի 27.11.2025թ. N 2875/25-1 գրությունը, Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Ալագյազ համայնքի Ալագյազ բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն համարվող 02-006-0101-0027 ծածկագրից առանձնացվող 0.02 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության և վարելահող գործառնական նշանակության հողամասը փոխել, որպես էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության և կապի գործառնական նշանակության:
2.Համայնքի ղեկավարի կողմից կազմել հողաշինարարական գործը և ներկայացնել լիազոր մարմնի քննարկմանը:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ջ. ԽՈՒԴՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 53)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 40 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՒԽԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները և Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը, Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Ալագյազ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 13-ի «Ալագյազ համայնքում ամանորյա զարդարման համար գումար հատկացնելու մասին» N 40 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններ և լրացումներ՝
Որոշման 1-ին մասի «4251 (չենք շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածից մինչև 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ» թվերը և բառերը փոխարինել «4251 (չենք շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածից մինչև 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ» թվերով և բառերով:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ջ. ԽՈՒԴՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ

Ա. ՇԱԲՈՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 54)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի բնակիչներ Թամարա Բուբոյանի, Ռոզա Մամոյանի և Նազե Բաքոյանի գրավոր դիմումները և Կանիաշիր, Ռյա--Թազա բնակավայրերի վարչական ղեկավարների միջնորդագրերը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներքոնշյալ շենքերը գտնվում են անմխիթար վիճակում և քաղաքացիների կողմից օգտագործումը կնպաստի այդ շենքերի պահպանմանը, քննարկելով նաև Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ շենք-շինությունները մեկ տարի ժամկետով տրամադրել օգտագործման հետևյալ քաղաքացիներին՝

1.Կանիաշիր բնակավայրում գտնվող ակումբի շենքի ձախ հատվածը մեկ տարի ժամկետով տրամադրել Կանիաշիր բնակավայրի բնակիչ Թամարա Բուբոյանին (անձնագիր AV0554528) տարեկան 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ վարձավճարով:

2.Կանիաշիր բնակավայրում գտնվող ակումբի շենքի աջ հատվածը մեկ տարի ժամկետով տրամադրել Կանիաշիր բնակավայրի բնակչուհի Ռոզա Մամեյանին (անձնագիր AU0484353) տարեկան 20000 (քսան հազար) ՀՀ դրամ վարձավճարով:

3.Ալագյազ բնակավայրում գտնվող բաղնիքի շենքը մեկ տարի ժամկետով տրամադրել Ալագյազ բնակավայրի բնակչուհի Նազե Բաքոյանին (անձնագիր AV0448029) 36000 (երեսունվեց հազար) ՀՀ դրամ վարձավճարով:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ջ. ԽՈՒԴՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 55)*

ԼՍԵՑԻՆ

ԱԼԱԳՅԱԶԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՒԽԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախատեսվում է ամանորյա տոներին նվիրված միջոցառում և Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը, Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Թույլատրել Ալագյազ համայնքի ղեկավարին Ալագյազ համայնքի 2025թ. բյուջեի «կառավարչական ապարատ» ծրագրի 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություն) հոդվածից մինչև 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ ամանորյա միջոցառում կազմակերպելու համար:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ջ. ԽՈՒԴՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 56)*

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՋԱԼԻԼ ԽՈՒԴՈՅԱՆ

ՌԵՋՈ ՄԱԽՄՈՒԴՈՎ

ՍԵՐԺԻԿ ՄՈՒՐԱԴՈՎ

ԱՆՁՈՐ ՇԱԲՈՅԱՆ

ՇԻՐԱԼԻ ՉՈԼՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ_____

Նիստն արձանագրեց՝ Արմինե Սարգսյանը_____